ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

05.03.21 N 14/04/4072-21

Ձեր N _____

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

ԷԼ. ՓՈՍՏ՝ foi@foi.am

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր սույն թվականի մարտի 1-ի թիվ 111598 հարցման կապակցությամբ հայտնում եմ, որ.

Հարց 1. Առողջապահության նախարարությունը տնօրինում է կորոնավիրուսային հիվանդության համավարակի ընթացքում իրականացված ՊՇՌ հետազոտություններին առնչվող քանակական տվյալները, սակայն www.livenews.am առցանց պարբերականի լրագրող Թագուհի Ասլանյանի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունն ամբողջությամբ չի համընկնում հաստատված հաշվետվական և վիճակագրական ձևերին՝ հաշվի առնելով վերջինիս առանձնահատկությունը՝ պայմանավորված կորոնավիրուսային հիվանդության նոր լինելով և համավարակի պայմաններում ձեռնարկվող միջոցառումների բնույթով: Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ շարունակաբար իրականացվում են համապատասխան վերլուծություններ, որոնց մեջ կներառվեն նաև վերը նշված հարցերը և կհրապարակվեն՝ պայմանավորված համաճարակային իրավիճակով:

Հարց 2. Հայկական թեստերով աշխատել են՝

- ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի (ք.Երևան), «Շիրակ» մասնաճյուղի (ք.Գյումրի), «Լոռի» մասնաճյուղի (ք.Վանաձոր), «Սյունիք» մասնաճյուղի (ք.Կապան), «Տավուշ» մասնաճյուղի (ք.Իջևան) և «Գեղարքունիք» մասնաճյուղի (ք.Մարտունի) լաբորատորիաները:

- «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի (ք.Երևան) և «ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ք.Երևան) (ներկայում՝ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ) լաբորատորիաները:

3. Հայկական թեստերի օգտագործման ժամկետների ներկայացման վերաբերյալ տեղեկության տնօրինողը հանդիսանում է արտադրողը՝ ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Գայանե Մելիք-Անդրեասյան
«ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
Հեռ՝ 010 550601